Ստրկութիւնը սկսել է եւ շարունակել տափակ երկրների վրայ եւ աւելի տաք կլիմայի մէջ: Տափակ երկիրը տալիս է մարդուն տափակ բնաւորութիւն, զարգացնում է նրա մէջ թեքուելու ընդունակութիւնը: Բայց լեռնային երկրի բնակիչը նոյնպէս ուղղաձիգ, նոյնպէս բարձրադիտակ է, որպէս իր շրջապատող սեպաձեւ ժայռերը: Հարթ-հաւասար անապատը չէ տալիս փախուստի միջոց եւ պատսպարան իր նեղեալներին: Մինչդեռ սարերը եւ անտառները միշտ ունեն իրանց ծոցի մէջ ապահով ապաստարան ապաւինողի համար:

Ատրպաականի գաւառները, բոլորած լեռների շղթաներով ընդարձակ հովիտներ էին հարթ-հաւասար մակերեւոյթով: Ժողովուրդը խիստ խորին կերպով արմատ էր գցել երկրի մէջ, նա ունէր հաստատ տուն եւ բնակութիւն. նա ունէր այգիներ, պարտէզներ եւ կայք: Ուր եւ քշում էին նրան, որքան եւ հալածում էին, նա դարձեալ չէր բաժանւում իր բնակութեան տեղից: Նա կանգնած էր միեւնոյն կէտի վրայ եւ համբերում էր իր վիճակի թշուառութեանը: Նա համբերում էր, որովհետեւ նրան դժուար էր բաժանուել մի երկրից, ուր պէտք է թողնէր իր շատ տարիների աշխատութեան պտուղը: Նա մեխուած էր գետնի հետ, որպէս իր տնկած ծառերը, իր շինած տունը եւ իր ցանած բոյսերը, որովհետեւ նրանց գոյութեան հետ կապուած էր իր կեանքը: Թէեւ այստեղ ժողովուրդը աշխատում էր մեծ մասամբ աղաների համար, բայց նրանք թողնում էին այնքան, որ մշակը կարողանար շարունակել իր կենդանութիւնը, որ նրա ձեռքերը կարողանային գործել: Բայց իսպառ խլել մշակից կեանքը, դա աղայի համար ձեռնտու չէր, որպէս ձեռնտու չէր նրան սպանել իր աշխատող անասուններին:

Ատրպատականի հայը միշտ երեւում էր զինուորուած իր երկրագործական գործիքներով. նրա ձեռքում միշտ տեսնւում էր բահ, բրիչ, մանգաղ եւ անասունները քշելու խարազան: Արիւն թափող եւ անձնապաշտպանութեան անօթների մասին նա գաղափար անգամ չունէր: Նա այնքան վախենում էր արիւնից, որքան դեւից եւ սատանայից: Տաք կլիման թուլացրել էր նրա ուղեղը, նրա կենսական ուժը: Տափակ երկիրը շինել էր նրան մի անփախչելի որս աղայի ձեռքում: Իսկ հողագործութիւնը պահպանում էր նրա մէջ անասնական բթամտութիւնը եւ եզի համբերութիւնը:

Տարօնը եւ Վասպուրականը աւելի լեռնոտ եւ սառն երկիրներ էին: Շատ տեղ սարերը ծածկուած էին անտառներով: Երկարատեւ ձմեռը, անդադար անձրեւները, իսկ տարոյ ջերմ եղանակներում երաշտութիւնը՝ կացուցանում էին հողը անյարմար ցանքերի համար: Ի բաց առեալ Վանայ ծովակի շրջակայ ցած երկիրները, եւ Ասորեստանի սահմանակից հարաւային